ԿԱՐԾԻՔ

«Հաստատում եմ»
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի տնօրեն, պատմական
գիտությունների դոկտոր
Ա. Ա. Բոբոխյան

Լիանա Արաիկի Դալլաքյանի «Հայ կնոջ ամուսնական ավանդույթների համապատկերում» (կրոնագիտական վերլուծություն)» Թ.00.05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության մասին

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի 2025 թվականի մայիսի 20-ին կայացած նիստում (արձանագրություն N 5):

Հայ կնոջ կերպարն ուսումնասիրվել և արժևորվել է հայագիտության և հասարակագիտության տարբեր գիտակարգերի, մասնավորաբար պատմության, ազգագրության, սոցիոլոգիայի շրջանակներում: Ըստ արժանվույն գնահատվել է հայ կնոջ ունեցած անփոխարինելի դերն ընտանեկան, պետական, սոցիալ-տնտեսական, ազգային-եկեղեցական ոլորտների կայացման ու պահպանման շարունակական գործընթացում: Հայ կնոջ կերպարը ժամանակագրական մեծ ընդգրկմամբ համակողմանիորեն ներկայացրած լավագույն աշխատություններից է Մխիթարյան հայրերից Վարդան Հացունու «Հայուհին պատմութեան առջեւ» (Վենետիկ, Ս. Ղազար, 1936) ուսումնասիրությունը, որը ինքնատիպ հարգանքի տուրք է հայուհու ազգապահպան, ընտանիքակենտրոն, առաքինի կերպարին: Ազգագրության տեսանկյունից ամուսնական ծիսաշարն ուսումնասիրել է Գայանե Շագոյանը՝ «Յոթ օր, յոթ գիշեր. հայոց հարսանիքի համայնապատկեր» (Երևան, 2011), իսկ եկեղեցական ծիսակարգերը՝ Անահիտ Մխիթարյանը «Պսակը և հարսանիքը հայոց մեջ՝ ըստ մատենագրական աղբյուրների (V-XVIII դդ.)» (Երևան, 2018) աշխատանքներում: Ընտանեկան միջավայրում կնոջն առնչվող սոցիալ տնտեսական և սոցիալ-մշակութային տարաբնույթ խնդիրներ, XX դարավերջի և XXI դարի ժամանակագրական կտրվածքով, քննարկվել են Միհրան Գալստյանի, Ռուբեն Օհանջանյանի, Թամար Զաքարյանի և Գայանե Հակոբյանի հեղինակած «Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում» (Երևան, 2017) կոլեկտիվ մենագրության մեջ: Թեման արծարծված է նաև

կանոնագիտական, մատենագրական, գրական աղբյուրներում, տեսական բնույթի ուսումնասիրություններում:

«Հայ կինն ամուսնական ավանդույթների համապատկերում» (կրոնագիտական վերլուծություն) ատենախոսական աշխատանքի հիմնական շեշտադրումն այն է, որ ներկայացվել են կանանց վերաբերող հայ կանոնական իրավունքով և սովորութային իրավունքով ամրագրված նորմերը՝ համեմատական վերլուծությամբ: Ուրվագծել է կնոջ կերպարն ու դերակատարությունը ներընտանեկան, ներազգային, ներեկեղեցական ավանդույթների փոխանցման համապատկերում:

Առաջադրված խնդիրներն ընդգրկուն ներկայացնելու միտումով ատենախոսն օգտագործել է ինչպես վերը նշված, այնպես էլ բազմաթիվ այլ ազգագրական, կանոնագիտական, մեկնողական սկզբնաղբյուրներ, XIX-XX դարերի մամուլ, գեղարվեստական գրականություն, թեմային առնչվող էթնոսոցիոլոգիական, ազգագրական ուսումնասիրություններ, Մաշտոցյան մատենադարանի ձեռագիր աղբյուրներ: Օգտագործվել են հայ և այլազգի հեղինակների՝ խնդրին առնչվող տեսական աշխատությունները՝ խնդիրները համակողմանիորեն դիտարկելու նպատակով:

Երկու գլխից բաղկացած աշխատանքի առաջին գլխի տասը ենթագլուխներում համակարգված վեր է հանվել նախ՝ կնոջ կերպարն ու նրան վերաբերող հրահանգներն Աստվածաշնչում, ապա անդրադարձ է կատարվել կանոնական իրավունքով կարգավորված այնպիսի խնդիրների, ինչպիսիք են կնոջ ամուսնական կարգավիճակը, միակնության և բազմակնության հարցերը, բռնի ամուսնությունները, այլադավանների հետ ամուսնության և ամուսնալուծության հարցերը, ինչպես նաև չափահասության, մերձամուսնությունների, այրի կանանց կարգավիճակին առնչվող խնդիրները՝ ըստ հայոց եկեղեցական իրավունքի:

Երկրորդ գլխի ութ ենթագլուխներում ներկայացվել են ընտանիքի՝ որպես ինստիտուտի ձևավորման և կայացման վերաբերյալ տեսական մոտեցումները՝ հայ և այլազգի տեսաբանների ուսումնասիրությունների հենքի վրա: Վերհանված են մի շարք հարցերի կարգավորման՝ սովորութային իրավունքով սահմանված նորմերը, որոնք են ամուսնության համար ընդունելի համարվող չափահասության խնդիրը, բռնի ամուսնությունների ժողովրդական դրսևորումները և դրանցից բխած խնդիրների կարգավորման ուղիները, խնամախոսության և նշանադրության ավանդույթները, այրի կանանց կարգավիճակը, հայ կնոջ կարգավիճակի փոփոխությունները: Ատենախոսության կարևոր շեշտադրումներից է այն, որ հեղինակը նշյալ հարցերի վերաբերյալ զուգահեռներ է անցկացրել կանոնական իրավունքի հետ: Ըստ այդմ՝ պարզվել է, որ եկեղեցական ժողովներով կամ կանոնական իրավունքով սահմանված որոշ նորմեր երբեմն շրջանցվել են սովորութային իրավունքի կողմից: Այս երևույթը ոչ այնքան ժողովրդի

անտեղյակության, որքան սոցիալ-տնտեսական կամ պատերազմական իրավիճակով պայմանավորված հենք է ունեցել: Ուշագրավ է այն, որ որոշ առանձնահատուկ դեպքերում Եկեղեցին, հաշվի առնելով այս կամ այն դեպքի առանձնահատկությունը, զիջումների է գնացել (տե՛ս, օրինակ, էջ 71-72): Ասվածը վերաբերում է հատկապես ամուսնացողների չհասության տարիքին, ամուսնացողների միջև ազգակցական հեռավորությանը, որը Եկեղեցին տարբեր ժամանակներում տարբեր է սահմանել (տե՛ս էջ 48-58), սակայն նշվում է, որ ժողովրդական սովորույթում չափահասության սահմանումներում եկեղեցականից շեղումներ են եղել (էջ 89): Մասնավոր դեպքերից է փեսացուի բացակայության պայմաններում նրա գլխարկի հետ կատարված պսակը (էջ 94): Մեկ այլ օրինակում առևանգմամբ ամուսնության դեպքում զույգը վանքում է ապաստանել, իսկ հոգևորականը պսակել է (էջ 97), թեև կանոնական իրավունքով առևանգմամբ ամուսնությունն արգելված էր (էջ 45-48): Ինչ վերաբերում է կողմերի բացակայությամբ ամուսնությանը, ապա ոչ միայն կանոնական, այլ նաև ծիսական կարգավորումներում պսակը կատարվում է ամուսնացող կողմերի մասնակցությամբ: Այն, որ նման բացառիկ դեպքերի վերաբերյալ կանոնական կարգավորումներ չկան, թերևս բացատրվում է նրանով, որ այդօրինակ դեպքերը սակավ են եղել, կամ Եկեղեցին անխուսափելի է համարել որոշակի իրավիճակում պսակ կատարելու անհրաժեշտությունը:

Լիանա Դալլաքյանը յուրաքանչյուր հիմնախնդիր դիտարկելուց հետո եզրակացրել է, որ թե՛ նախաամուսնական, թե՛ ամուսնական կանոնական իրավունքում Եկեղեցին մշտապես կնոջ իրավունքները չոտնահարելու դիրքերից է հանդես եկել:

Կարևորելով ատենախոսության առանցքային նպատակը, այն է՝ կանոնական և սովորութային իրավունքների համեմատական վերլուծությունը, ունենք նա որոշ դիտարկումներ:

Ատենախոսությունն առավել կշահեր, եթե ազգագրական և գեղարվեստական գրականության ավելի լայն շրջանակ օգտագործվեր, մասնավորաբար պատմական Հայաստանի տարբեր բնակավայրերի պատմաազգագրական նկարագրին վերաբերող XX-XXI դդ. հետազոտողներ Արշակ Ալպոյաճյանի, Հակոբ Չոլաքյանի, Սերգեյ Վարդանյանի և այլոց, գեղարվեստական գրականությունից՝ Պերճ Պռոշյանի, Ավետիս Ահարոնյանի և այլոց աշխատանքները:

Հայ կնոջ խիզախությունը, ինքնուրույնությունը, կամքը շեշտելու նպատակով ատենախոսը վեր է հանում «Սասնա ծռեր» էպոսում գործող կանանց կերպարները: Հետաքրքրական կլիներ հայ կնոջ այդ, ինչպես նաև այլ հատկանիշներ դիտարկել նաև հայ ժողովրդական հեքիաթներում գործող կանանց կերպարների հետ համեմատության համատեքստում:

Հիմնական դիտարկումներից է այն, որ հարսանեկան ծեսի, նշանադրության, մանկան ծննդի հետ կապված մի շարք դրվագներ կարելի էր առավել համառոտ ներկայացնել: Սակայն ենթադրելի է, որ դրանց շարադրմամբ հեղինակը նպատակ է ունեցել է՛լ ավելի պատկերավոր դարձնելու կանոնական և սովորութային իրավունքների միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Ատենախոսի մեջ բերած ուշագրավ օրինակներից են Լազարյան և Այվազովսկի ընտանիքների պատմությունները՝ կապված մերձամուսնության և ամուսնալուծության հետ (էջ 54, 71): Աշխատանքն ավելի կշահեր, եթե վերոնշյալ, ինչպես նաև չափահասության և մի շարք այլ հարցեր քննարկելիս հեղինակն ավելի մեծ թվով օրինակներ ընդգրկեր հայ արքունական և իշխանական ընտանիքների պատմություններից՝ ցույց տալու համար, թե նրանցում որքանով է գերակա կանոնադրական կարգը և որքանով՝ սովորութայինը:

Աշխատանքի արդիականությունը կշահեր, եթե խնդիրներն ուսումնասիրվեին նաև մերօրյա փոփոխությունների համապատկերում, և ըստ այդմ՝ ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների ժամանակագրական վերլուծություն կատարվեր:

Ժամանակակից աշխարհում ընտանիքի առջև ծառացած մի շարք մարտահրավերներ գրագետ հաղթահարելը, ազգային-եկեղեցական ավանդույթներին համապատասխան ընտանիքի մոդելը վերարժևորելը և պահպանելը, ընտանիքի՝ որպես պետության կարևորագույն ինստիտուտի առողջ ու լիարժեք կենսագործունեությունն ապահովելը հույժ կարևոր խնդիր են, և այս առումով հարցերի կարևոր շրջանակի վերաբերող սույն ատենախոսությունը, անշուշտ, կարևոր է և արդիական:

Եզրակացություն

Լիանա Արաիկի Դալլաքյանի «Հայ կինն ամուսնական ավանդույթների համապատկերում» (կրոնագիտական վերլուծություն)» Թ.00.05 - «Կրոնի տեսություն և պատմություն» պատմական գիտությունների հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի շատ կարևոր տեսական և գործնական նշանակություն: Եզրահանգումները կարող են գիտական հիմք հանդիսանալ ավանդական և արդի ժամանակաշրջանում հայ կնոջ կանոնական և սովորութային իրավունքների համեմատական խնդիրների հետագա վերլուծության համար:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»

պահանջները, ուստի միջնորդում ենք Մասնագիտական խորհրդին Լիանա Արաիկի Դալլաքյանին շնորհել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Թ.00.05-« Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
սոցիալական գործընթացների և ինստիտուտների
մարդաբանության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր
Միհրան Վարդգեսի Գալստյան